ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 198-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետ.

«2.1. Ընդհանուր գույքի նկատմամբ օրենքով պարտադիր գրանցման ենթակա իրավունքը տնօրինելու գործարքներ կնքելիս ներկայացվում է համատեղ սեփականության յուրաքանչյուր մասնակցի գրավոր համաձայնությունը, եթե նրանց իրավունքը գրանցված է:»:

Հոդված 2. Օրենսգրքի 201-րդ հոդվածի՝

1) վերնագրում «սեփականությունը» բառից հետո լրացնել «և պարտավորությունները» բառերը.

2) 1-ին կետում «սեփականությունն է,» բառերից հետո լրացնել «եթե ամուսիններից մեկը չի ապացուցում, որ այդ գույքը ձեռք է բերվել բացառապես իր մինչամուսնական գույքն օտարելու արդյունքում առաջացած միջոցներով (գույքային սուբրոգացիա), և» նախադասությունը.

3) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«Ընդհանուր գույքի ծավալը որոշվում է գույքը բաժանելու պահին առկա գույքի շրջանակներում:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ կետ՝

«3.2 Ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի անձնական ոչ գույքային իրավունքներից ծագած գույքային իրավունքները բացառապես պատկանում են այդ ամուսնուն, եթե այլ բան նախատեսված չէ ամուսնական պայմանագրով:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ՝

«6.Ամուսիններից մեկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում նաև մյուս ամուսինը, եթե ապացուցվում է, որ ստացվածն ուղղված է եղել բացառապես համատեղ գույք ձեռք բերելուն կամ գույքը բարելավելուն, սակայն ոչ ավելի, քան ավելացած գույքի՝ տվյալ ամուսնու բաժնի չափով:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված գործարքների նկատմամբ:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

2012 թվականի հունիսի 30-ի ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարագադրության 6.1-րդ կետով նախատեսվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը անհրաժեշտ է համապատասխանեցնել մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին: Դատաիրավական բարեփոխումների շրջանակում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Համատեղ սեփականության տիրապետման, տնօրինման, օգտագործման կարգը սահմանելիս օրենսդիրը լուրջ խնդիրների առաջ է կանգնում: Մի կողմից այն պետք է հնարավորինս հեշտ լինի, որպեսզի յուրաքանչյուր գործողություն կատարելիս մյուսների համաձայնությունը ստանալը անհարկի չբարդացնի գործարքների կնքումը և քաղաքացիաիրավական շրջանառությունը: Օրինակ՝ եթե ամուսիններից մեկը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, գործունեության

արդյունքում ստացածը ամուսինների համատեղ սեփականությունն է, սակայն դրանց կապակցությամբ ցանկացած գործարք կնքելիս մյուս ամուսնու համաձայնություն ստանալու պարտադիր պահանջը կարող է խոչընդոտել կոնտրագենտների հետ նրա բնականոն հարաբերություններին:

Մյուս կողմից պետք է հավասարակշռվեն մյուս համասեփականատերերի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը, որպեսզի մի համասեփականատերերի համար հնարավոր զսպող մեխանիզմներ լինեն այլ սեփականատերերի իրավունքների առումով:

Այլ հիմնախնդիր է նաև չլիազորված գործարքների դեպքում բարեխիղճ ձեռքբերողի սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրը: Նորմալ քաղաքացիաիրավական շրջանառությունը պահանջում է բարեխիղճ ձեռքբերողի առավելագույն պաշտպանություն, ինչպես նաև կարևոր հիմնախնդիր է համասեփականատերերի իրավունքների չարաշահման հնարավորությունը, երբ բարեխիղճ պարտատերերին կամ նոր սեփականատերերին փորձում են հնարավորինս քիչ գույք հանձնել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2009թ. թիվ ԵՔԴ/0256/02/08 քաղաքացիական գործով սահմանվեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ օրենսդիրը, հաշվի առնելով, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը:

Այս կապակցությամբ 2012 թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտավ, որ համատեղ սեփականության փաստն ինքնին չի կարող ենթադրել համասեփականատերերից յուրաքանչյուրի մոտ համատեղ գույքը հայեցողաբար տնօրինելու լիազորության առկայություն: Նման կանխավարկածը բոլոր այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգին համապատասխան որոշված է համասեփականատերերի կոնկրետ շրջանակը, կամ նրանք որպես այդպիսին ճանաչվել են օրենքի ուժով, իրավակիրառական պրակտիկայում պետք է բացառել:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

2012 թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը սահմանեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

ՀՀ սահմանադրական դատարանի տրված մեկնաբանությանը համապատասխան՝ ընդհանուր կանոնն այն է, որ գույքը տնօրինվում է բոլոր

մասնակիցների համաձայնությամբ: Քանի որ տնօրինման հիմնական ձևը գործարքների կնքումն է, օրենսդրական կարգավորման է ենթակա գործարքներն ինչ ընթացակարգով կարող են կնքվել՝ հիմքում ունենալով ընդհանուր կանոնը: Բոլոր մասնակիցների համաձայնության պայմաններում համատեղ սեփականության յուրաքանչյուր մասնակից կարող է կնքել գործարք: Հաշվի առնելով քաղաքացիական շրջանառության առանձնահատկությունները, օրինակ մանր կենցաղային գործարքներ կնքելիս, այստեղ մնացած մասնակիցների համաձայնությունը անհրաժեշտ է, բայց երրորդ անձանց որևէ հավաստում ներկայացնելու անհրաժեշտություն ըստ էության չկա (բավարար է բանավոր համաձայնությունը): Սակայն առավել մեծ արժեք հանդիսացող իրավունքների դեպքում, որոնք ենթակա են գրանցման, համասեփականատերն իր լիազորության առկայությունն երրորդ անձանց առջև պետք է հավաստի մյուս բոլոր համասեփականատերերի համաձայնությունը ներկայացնելու միջոցով: Այն դեպքում, երբ գործ ունենք գրանցված իրավունքների հետ երրորդ անձինք պետք է պահանջեն մյուս սեփականատերերի համաձայնությունը, որովհետև ի սկզբանե տեղյակ են, որ գույքը համատեղ սեփականության իրավունքով է պատկանում:

Նախագծի նորամուծություններից է այն,որ եթե ամուսիններից մեկն ապացուցում է, որ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքը բացառապես մինչամուսնական գույքի հաշվին է ձեռք բերվել, ապա այն համարվում է միայն այդ ամուսնու սեփականությունը: Այս առումով կարևոր հանգամանք է այն, որ նոր ձեռքբերված գույքի մեջ մյուս ամուսինը որևէ ներդրում չունենա: Օրինակ, եթե ամուսիններից մեկը վաճառում է իր մինչամուսնական տունը և գնում նույն արժողության նոր տուն, ապա դա շարունակում է մնալ իր սեփականությունը, սակայն եթե գնվում է ավելի թանկ արժողության գույք, ապա այն արդեն հանդիսանում է համատեղ սեփականություն, քանի որ համատեղ գույքի ներդրման արդյունքում է գույքը ձեռք բերվում: Այս նույն սկզբունքն է ներդրվել նաև ամուսինների անձնական ոչ գույքային

իրավունքներից ծագած գույքային իրավունքների, ամուսինների պարտավորությունների համար:

4. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը

Սույն օրենքի նախագծի ընդունման արդյունքում քաղաքաղաքացիաիրավական սուբյեկտների իրավունքները համատեղ սեփականության գույքի հետ կապված իրավահարաբերություններում ավելի պաշտպանված կլինեն, կհստակեցվեն ամուսինների գույքի կազմը, այդ թվում իրավունքները և պարտավորությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական և տեղական ինքնակառավարման բյուջեում ծախսերի ավելացում կամ եկամուտների նվազեցում չի նախատեսվում: